



ՅՈՂԵՐ ՄԱՆՈՒԿՆԵՐԻՆ



ԽՐԻԳՈՐ ՔԱՅ. ԳՈՐԳԵԱՆՑ

Ա. ԳԻՐԺ

ԿԱՐԿՈՒՏ

(Արտասպած «Հասկեր»-ից)

○○○○○○○○○○○○

Թ Ի Ֆ Լ Ի Զ

Տպ. Ե. Աղանեանի, Պոլից. 7

1194

891. 995

1914

Գ - 81



2011 - 05

ԳՐԻԳՈՐ ՔԱՂ. ԳՈՐԳԵԱՆՑ

891.99 Ա.

4-81

ԱՐ ՅՈՂԵՐ ՄԱՆՈՒԿՆԵՐԻՆ  
ԱՐ

Ա. ԳԻՐՔ

1002  
14  
85  
66

ԿԱՐԿՈՒՏ

(Արտասպած «Հասկեր»-ից)



ԹԻՖԼԻԶ  
Տպ. Ն. Աղանեսի, Պօլից. 7  
1914

## ԿԱՐԿՈՒՏ

—Ա՛ Մակ, բալաս, վեր կաց, գիւղում էլ մարդ չը մնաց, —ասաւ Խաթունը մինուճար որդուն, որ քնած էր աղքատիկ անկողնում և տան անկիւնից չւալն ու չաթուն վերցնելով դուրս եկաւ. ապա կրկին ներս մտնելով ըսկըսեց մեղմ տրորել նրան:

— Ա՛ Մակ, ջանիկ, չես լսում. վեր կաց, վեր, մեծ հարսի Սաքին վաղուց է խրձան գնացել, դու էլ վեր կաց, մատաղ, որ գընանք, հասկեր հաւաքենք:

— Հասկեր... — քնամիջից դուրս թռաւ Մակու փոքրիկ շրթունքներից:  
— Հա, մատաղ, հասկեր, հասկեր հա-

ւաքենք—ասաւ Խաթունը աւելի բարձր,  
աւելի ազդու:

Մօր գորովալից ձայնից Մակին քը-  
նից սթափւեց: Աչքերը մի քանի ան-  
գամ տրորելուց յետոյ, շեշտակի  
շուրջը դիտեց ու նստեց և չանցած մի  
քանի ըռպէնա պատրաստ կանգնած էր:

Խաթունը առանց ժամանակ կորց-  
նելու, Մակու կողքից քաշ ընկած  
տոպարակի մէջ երկու հաց դրեց, սրա-  
հում պատրաստի դըրած չւախն ու չա-  
թուն կոնատակը առնելով շտապ ճանա-  
պարհ ընկաւ դէպի Քար աղբիւրի ար-  
տերը:

Սքանչելի առաւօտ էր: Բոց կտրած  
արևելքից արևը նոր էր իր ոսկեգոյն  
ճառագայթներով բարև տալիս աշխար-  
հին: Գիւղացիք վաղուց էին գաղթել  
դաշտ. հասունացած արտերը շունչ ու  
հոգի էին տւել նրանց: Ով արտ ունէր,

ով հնձողի տէր էր, բախտաւորը նա  
էր: Զմեռայ դաժան օրերի հոգսը  
նրանց չէր տանջում:

Մակին ու իր մայրը անցնում-  
էին հասունացած արտերի միջով, ո-  
րոնք ծովի պէս փռւած՝ դեղնի էին  
տալիս: Թռչունները չարաճճի խաղե-  
րով անցնում էին արտից՝ արտ, եր-  
գում, հասկերի հետ պար բռնում,  
գլուխ գլխի դնում, համբուրւում, կըր-  
կին պար բռնում, հասկերի հետ չա-  
րաճճի խաղեր սկսում, նրանցից հա-  
տիկներ յափշտակում:

Խաթունին թւում էր, թէ թըռ-  
չունները իրանց խաղերով ծալրում  
են իրան, իսկ մեղմ հովից խշխացող  
ծանրաբեռնաւած ցողունները իր վիշտն  
են մրմնջում: Խեղճ. նա յիշեց իր ան-  
ցեալը: Յիշեց, որ մի ժամանակ ինքն  
էր անճարին օդնութիւն տալիս, իսկ

այժմ՝ ստիպւած է այս լի դաշտում  
օգնութիւն խնդրել ուրիշներից։

Խաթունը վերջապէս հասաւ Քար-  
աղբիւրին, որը բղխում էր մի ժայռի  
ստորատից։ Նա նման էր քարէ աւա-  
զանի, որի պատճառով գիւղացիք ա-  
նունը մկրտել էին Քար աղբիւր։

Աղբիւրի շուրջը տարածւած ար-  
տերում, մարդ ու կին, փոքր ու մեծ  
վխտում էին։ Մանգաղը լեզու առած  
խօսում էր և, նորածագ արեից պլս-  
պղալով, անցորդների աչքը շացնում։

—Ա Մակ, բալաս, գնա, երեսդ  
լացիր, առաւօտը չըկարողացար աչ-  
քերիդ ճպուռները վեր անել, — ասաւ  
Խաթունը, մասաւ հնձած արտերից մէ-  
կը ու սկսեց ուշաղիր հայեացքով  
հասկեր որոնել։

Մակուճակատից քրտինքը կաթիլ-  
կաթիլ թափւում էր ողողելով անլւայ

երեսը։ Նա մօտեցաւ աղբիւրին, մի  
քանի փափուկ և չումփ» արաւ, փա-  
փախով երեսը սրբեց, այտերը սկսեցին  
կարմիր խնձորի գոյնով փայլել։ Սառը  
ջուրը մոռացնել տւաւ Մակուն յոգ-  
նածութիւնը։ Նա մի քանի թռիչքով  
հասաւ մօրը։

Մայր ու որդի անցնում էին ար-  
տից-արտ, ուր գործել էր հնձորի  
մանգաղը։ Խաթունը բարձր ու ցածր  
անելով, հաւաքում գոյնոցն էր ծգում  
հնձորների անգուշտութիւնից կամ  
անտարբերութիւնից ընկած հասկերը։  
Իսկ Մակին կիսով չափ ծյնոտում  
ծածկւած՝ այս ու այն կողմն էր վա-  
գում, պատահած հասկը վերցնում, մի  
տեղ ժողովում խտիտ անում, բերում  
մօրը տալիս։

—Ա՛ նան, հէ, ա նան, մի մեծ,  
մի մեծ հասկ գտայ. կանչում էր Մա-

կին հասկը բարձր բռնած, մօլը ցոյց  
տալիս:

— Լաւ արիր, մատաղ, լաւ արիր.  
Էլի գտի, շատ գտի, որ ջրւալը շուտ  
լցնենք:

Բայց երբ հասկերը ուշ, ուշ էին  
երևում, Մակին շարունակ ժողոված  
հասկերի կողմից ասում էր.

— Մայեա, մայեա, իմ ընկերը  
գայ. մայա, մայեա իմ ընկերը գայ...

Եւ երբ հասկը երևում էր, նա  
ուրախ ճիչ էր արձակում:

— Զան, ջան, եկաւ, եկաւ, իմ ըն-  
կերը եկաւ,—ուրախ, ուրախ վերցնում  
համբուրում, ժողոված հասկերի հետ  
դնում ու նորից այս ու այն կողմն էր  
ընկնում:

— Ա' Մակ, հէ, ա' Մակ, ա' Մակ,  
— կանչեց դիմացի արտից մի հնձոր  
մանգաղը բարձր բռնած:

— Հէյ, հէյ, ինչ ա, ինչ ես ա-  
սում:

Մակու մանկական զիլ ձայնը ար-  
ձագանք տւաւ մօտակայ ձորում ու  
կորաւ շատ հեռու:

— Ե'կ, կուլէն տար, աղբիւրի գլ-  
խնվ, եկ, աղբիւրի գլխնվ, է, աղբիւրի  
գլխովը,—ասաւ հնձորը ու սկսեց հըն-  
ձել:

— Եկայ, է, եկայ — ասաւ Մակին  
ու վազեց դէպի հնձորը:

Մակին հասկացաւ, որ հնձորը  
իրանից ջուր է խնդրում, հասաւ նրան,  
կուլէն գետնից յափշտակեց, մի քանի  
թոփչքով հասաւ աղբիւրին, և նոյն ա-  
րագութեամբ կուլէն ջրով լիքը յան-  
ձնեց նրան, և ստացաւ այդ աշխա-  
տանքի փոխարէն մի խուրձ:

Մակուն ջրի դիտմամբ ուղարկողը

Թանան-ապէրն էր, Նրա հանգուցեալ  
հօր ընկերը:

Խաթունը ծանը քայլերով հասաւ  
խրձանը, գլխի շարժումով մի քանի  
անգամ շնորհակալութիւն յայտնեց Թա-  
նան ապօրը, ու խուրձը ուսին առաւ.  
իսկ Մակին մի քանի ուրախ ոստում-  
ներով հասաւ չւալին և բռնեց նրա  
բերանից:

—Նանէ, էսօր շուտ կըդնանք  
տուն, չէ,—ասաւ Մակին սրտի մեջ  
բաւականութիւնով, երբ մայրը սիրտ  
ճմլող ախերով խուրձը գետնին դրեց:

—Հա, մատաղ, հա, շատ շուտ,  
չւալի բերանը լէն պահիր:

Զան, ջան, էսօր շուտ կըդնանք  
տուն.—ասաւ Մակին ու ուրախու-  
թիւնից սկսեց ոտքերը բարձր ու ցածր  
անել:

Եւ շուտով նորից սկսեց լսել նրա

«մայեա, մայեա, իմ ընկերը գայ, իմ  
ընկերը գայ» կամ «ջան, ջան իմ ըն-  
կերը եկաւ», իսկ Խաթունը անցնում  
էր կռացած՝ մէկ հնձած հանդից միւսը,  
մի մի հատիկ հասկ հաւաքելով:

\* \*

Կէս օրւայ հանգիստը լրացաւ:  
Ժամանակաւոր լոռւթիւն առած դաշ-  
տը նորից շունչ հոգի առաւ: Մանգաղը  
աւելի եռանդով սկսեց հնձել: Մակին  
ու Խաթունն էլ, աղքատիկ ճաշից յե-  
տոյ, վերսկսեցին իրանց աշխատանքը:

Երկինքը պարզ էր, արեւ այրող:

Բայց հազիւ էր անցել մի ժամ,  
որ հեռու արեմուտքում տարածւած  
ամպի կտորները սկսեցին խտանալ,  
խտանալ ու կուտակւել: Մի վիթխարի  
սև ամպ, դեռ դանդաղ, ապա արագ-  
արագ սկսեց առաջ գալ գորգուալով,  
իր թեւերի տակ առնելով լեռ, ան-

տառա Քամին, որ կարծես սառցի աշխարհից էր գալիս, ուժգին թափով անցաւ։ Դաշտը դողաց, իր հնձւորներով, խրձան արտերով, տասնեակներով։ Երգ, ծիծաղ առաւ բոլորի բերանից, սարսափը թագաւորեց դաշտին։ Մանգաղը թուլացաւ։ Արեւ կլանւեց ամպերից, դաշտը մոռյւեց։ Վիթխարի ամպը մերթ պատառ-պատառ էր լինում կայծակներով և նորից միանում։ Կատաղիքամին տանում իրար էր խառնում ծանրաբեռնած մարդահասակ ցօղուները ու գետնին պառկեցնում։ Մեղմ անձրև տեղալ սկսեց։

Մակին մի փունջ հասկ ձեռքին, ահաբեկ աչքերով, դիտում էր առաջ եկող ամպին։ Նրա սիրտը դողում էր օձաձեւ գալարւող կայծակներից և որոտի ուժգին ճայթիւններից։

—Ա, նան, նանէ, եկ, գնանք տուն,

շուտ գնանք, — ճշաց Մակին ու մօր գիրկը նետւեց։

Խաթունը ցանկացաւ որդուն սիրտ տալ, հանգստացնել, —խօսքը շրթունքներին սառաւ։ Ամպը չը լաւած ճայթիւնով դղրդաց շատ մօտիկ։ Դիմացի ժայռը որոտաց, կարծես տեղիցը շարժւեց։ Յուսահատութիւնը պատեց շըրշակայքին։

Մակու ահաբեկ աչքերը աղերսագին յառեցին մօր դէմքին և աղաչում էին դադնալ տուն։ Մայքը թները տարածեց նրա վրա, կրծքին սեղմեց, աշխատելով որդու դողացող մարմինը տաքացնել։

Քամին անձրևախառն, վնւ, վնւ, վը զզ... գոռալով, անցաւ. կարծես դաշտը տակն ու վրա եղաւ։

—Նանէ, ա, նան, շուտ, շուտ, գնանք տուն, կարկուտ-կարկուտ է գա-

լու; — սրտամորմոք մը մնջաց Մակին։  
— Ի՞նչ ես ասում, բալաս, էտ  
անտէրի անունը մի տալ. Աստւած  
չանի, որ աշխարհ քանդող գլուլի ե-  
րեսը տեսնենք, — ասաւ Խաթունը, ցան-  
կացաւ երեսին խաչ հանել, թրը՝ խկ,  
մի ձւի չափ կարկուտ ընկաւ ոտքերի  
առաջ։

Խաթունը ցնցւեց։ Նա կարկուտը  
գետնից յափշտակեց, ատամներով եր-  
կու մաս արաւ, ուժի բոլոր թափով  
գետնին շպրտեց։ Այդ նկատեց Մակին,  
աչքերը ծածկեց ու աւելի կծկւեց։

— Դանակով կէս արէք, դանակով,  
որ էտ տուն քանդող, աշխարհ աւերող  
գլուլը շուտ հեռանայ մեր հանդերից, —  
սրտաճաք ճիշով հնձւորները դիմե-  
ցին խուրձ կապողներին, որոնք բռնած  
ունէին մի-մի ձւի չափ կարկուտ, և  
սարսափով դիտում էին նրանց մեծու-

թիւնը։ Հնձւորների ճշոցները ուշքի-  
քերին ահից շշմած Խաթունին. նա  
կանգնեց, ծնկները դողում էին։ Չւալն-  
ուսեց, դողդոջուն մատերի մէջ առ-  
նելով Մակու. ձեռքը։

— Գնանք, բալաս, գնանք, քերձի-  
տակ, — ասաւ Խաթունը և քայլերը ուղ-  
ղեց դէպի մօտ գտնուղ ժայռի ստո-  
րոտը, համարեա քաշ տալով Մակուն,  
որը ցրտից ու ահից չէր կարողանում  
քայլել։

Մայր ու որդի մի ապահով տեղ  
գտնելով կծկւեցին, թիկունքից ժայռն-  
էր հովանաւորում իսկ դիմացից՝ հաս-  
կերով լիքը չւալը։

Երկինքը շարունակ գոռոցներով  
հրեղէն նետեր էր ուղարկում այս ու  
այն կողմերը։ Դաշտը կարծես տակն  
ու վրա էր լինում։

— Երկինքը էս էլ շատ համա-

քեց, —իսեղդւած ձայնով ասաւ Խաթունը  
ձեռք դնելով չւալի վրա ու սկսեց  
հեղեղի պէս արցունք թափել կրծքում  
գունդ դարձած Մակու գլխին.

Զըշեկ, ուժգին թափով մի կար-  
կուտ դիպաւ ժայռի կրծքին՝ ու շեշ-  
տակի ետ դառնալով ընկաւ Խաթունի  
դիմաց: Մակին աչքերը լայն բացեց,  
ահից բռնւած հայեացքը յառեց մօր  
աչքերին ու կրկին զլուխը ցած թո-  
ղեց, —մօր արցունքները աւելի սար-  
սափելի էին, քան թէ երկնքի որոտն  
ու կայծակը: Եւ Մակին որոշեց զլու-  
խը այս չըբարձրացնել:

Յանկարծ Խաթունը մտաքերեց  
մի աղօթք, որ սովորել էր իր տաշից:

—Ի՞նչու չասացի, ի՞նչու ուշ մի-  
տքս ընկաւ... Ասեմ, ասեմ: Երկինք  
ջան, դու խնայես, —մըրմնջաց Խա-  
թունը, ծով դարձած աչքերը ուղղեց

երկնքին, որ սարսափ էր ազդում, ու  
սկսեց փըսփսալ.

Կարկտաքերին ժամ տանեմ,  
Չեռքերին պաշ անեմ,  
Ոտքերին մոմ վառեմ:  
Գլխովը շուռ անեմ,  
Զալ գառը մատաղ անեմ.  
Պողերը օջաղ անեմ,  
Ոտքերը կրակ անեմ,  
Կարկուտը ջուր անեմ,  
Գետերը վարար անեմ,  
Հանդերը ջուր տանեմ,  
Արտերին ջուր անեմ.  
Հացը բոլ անեմ:

Վերջի «անեմը» Խաթունի բերա-  
նումն էր, որ յորդ անձրև սկսեց:

—Ա՛ Մակ, բալաս, կարկուտը ջուր  
դառաւ. —աւետիք տւաւ որդուն, ու  
ցանկացաւ աղօթքը նորից կրկնել

«Կարկտաբերին», շրթունքներին սառած մնաց:

Թրըխկ, շրըխկ, ջրըխկ, թըրըխկ,  
երկնքից սկսեց սառցի քարեր տեղալ:

Կատաղի կոփւ սկսեց երկըի ու երկնքի մէջ: Դաշտը տնքում էր ցաւից: Դիմացի հարթութեան վրա գլունուղ արտերը գետնին հաւասարեցին: Խաթունը քար կտրեց, արցունքները չորացան աչքերին:

—Կարկնւտ, կարկնւտ,—զառանցում էր Մակին:

—Հա, մատաղ, կարկուտ. կարկուտ մեզ բաժին դնկաւ, աղօթքը ետի տանցի, —ոպանիշ ծայնով ասաց Խաթունը ու լուց: Մայր ու որդի մի գոռնդ գտրձան:

Իսկ ժայռը շարունակ ձայն էր տալիս «թըրիկ, շրըխկ», կարծեա նա էլ դժգոհ էր երկնքի բացած կուից:

Ահեղ կոփւը շատ կարճ տևեց: Կարկուտը զաղարեց: Գետակները լիգում էին գաշտի երեսը, տանելով արին քրտինքով շաղախւած վաստակները: Արևը ամպերի տակից նայեց ու արևմուտքում շուտ ծածկւեց: Դաշտը ողբում էր իր հնձւորներով, գետնին հաւասարւած արտերով, ճզակոտոր ծառերով ու թփերով: Արտասւում էին և քարերը: Մեռած դաշտում, միայն գետակների քրքիջն էր լսում: Ամենքին թւում էր, թէ այդ քրքիջները ծաղրում են իրանց:

—Շատերի արին քրտինքը տաշար, էս էլ տար—օիրտ կտրատող ձայնով կանչեց Խաթունը ու չւալը դատարկեց մօտ վազող գետակի մէջ:

—Ա՛ նան, իմ վիճերն էլ ածեցիր,—լսելի եղաւ Մակու մորմոքիչ ձայնը:

— Հա, մատաղ, քոնն էլ. եկ, շուտ  
գնանք էստեղից, — ասաւ Խաթունը՝ Մա-  
կու ձեռքից բռնելով ու քայլերը ուղ-  
ղեց դէպի գիւղը:

Եկեղեցու զանգերի ճայնը դեռ  
միապաղաղ հնչւում էին, երբ Խաթու-  
նըն ու Մակին հասան գիւղին: Խաթու-  
նին թւաց թէ զանգերն էլ են բողո-  
քում.

— Կարկուտ, կարկուտ:

ՅՅՅՅ



ՀՀ Ազգային գրադարան



NL0395847

7935

Իմ աշխատասիրութիւննե  
ապագրութեան

1.	Զալտիկ հաւը և ձագմարիկը	«Աղբիւր»	1909 թ. № 11
2.	Թուխիկին Զատիկը	տարաւ	» 1910 » 4
3.	Խմաստուն վազկանը	»	1910 » 8
4.	Զին և իր բեռը	»	1910 » 12
5.	Երկու համբոյը	»	1911 » 2
6.	Փոքրիկ ջաղացաւորը	»	1911 » 8
7.	Սերմնացանը	»	1911 » 11
8.	Զատիկը բերաւ	»	1912 » 3
9.	Սովամահ մարալը	»	1912 » 3
10.	Սաքօյի հրաժեշտը	»	1913 8
11.	Փոքրիկ վիրակապը (ձեռագիր)		

Յանձնած և սպագրու

ԶԱՏԻԿԸ ԲԵՐԱՒ

ԳԻՆԸ 5 ԿՈՊ.